

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2025 թ. **թիվ 1/407 Ա**

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը 2025 թվականի հոկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել առավելագույնը 20,000,000,000 (քսան միլիարդ) ՀՀ դրամ, 20,000,000 (քսան միլիոն) եվրո և 70,000,000 (յոթանասուն միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագրի գրանցման հայտ, ինչպես նաև՝ համապատասխան ազդագիրը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ով ազդագրի գրանցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը:

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը 2025 թվականի նոյեմբերի 4-ին ներկայացրել է նաև ծրագրային ազդագրի լրացում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության կոմիտեի եզրակացությունը (2025 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 50 արձանագրություն)՝

Ո ր ո շ ու մ ե մ.

1. Գրանցել «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից 2025 թվականի հոկտեմբերի 16-ին (2025 թվականի նոյեմբերի 4-ին ներկայացված լրացումով) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված ոչ փաստաթղթային, անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ծրագրային ազդագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՅԴԻ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն մուտքագրվելու կամ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

X

Signed by: GALSTYAN MARTIN 1405780029

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ